



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 16 ՆՈՅԵՄԲԵՐ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն ԿԲԱՐԻՍ ԽՈՐԻԷԼ ԵՆ ԽՍՍԵԼ ԵՆ գործել առաջի քո լամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա ԿԻ. ԵՆ ողորմեա քո արարածոց եւ Ինձ բազմամեղիս: Ամէն:

ԻՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՄՈՆԻ 3

ԱՄԲԱՐԻՇՏՆԵՐՈՒՆ ՍԽԱԼԸ ԵՒ ԱՐԳԱՐՆԵՐՈՒՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Այսպէս խորհեցան ու խարուեցան ամբարիշտները,
որովհետեւ իրենց չարութիւնը գիրենք կուրցուց:
Զնանչցան Աստուծոյ խորհուրդները,
եւ չուզեցին սրբութեան վարձքը,
եւ չընտրեցին անարատ հոգիներու պատիւը:
Աստուած մարդս ստեղծեց անեղծ ըլլալու համար,
իր պատկերին համաձայն:
Բայց մահը աշխարհ մտաւ բանսարկուին նախանձով:
Արդարներուն հոգիները Աստուծոյ ձեռքին մէջն են,
եւ մահը պիտի չմօտենայ անոնց:
Ամբարիշտները կարծեցին, թէ անոնք մեռան,
բայց անոնք խաղաղութեան մէջ են:
Անոնք փորձուեցան, ինչպէս ոսկին կրակին մէջ,
եւ իրենց անձերը իբրեւ գոհ ընծայեցին Աստուծոյ:
Իսկ երբ Տէրը այցելութեան գայ,
անոնք պիտի պայծառանան ու վեր ընթանան:
Անոնք, որոնք իրենց յոյսը Աստուծոյ վրայ դրած են,
պիտի իմանան նշմարտութիւնը:
Անոնք, որ հաւատարիմ են, սիրով պիտի սպասեն Տիրոջ,
որովհետեւ այդպիսիներուն համար է
Աստուծոյ շնորհներն ու ողորմութիւնը:
Իսկ ամբարիշտները, որոնք արհամարհեցին արդարութիւնն
ու ապստամբեցան Տիրոջ դէմ,
պիտի կրեն իրենց պատիժը՝ իրենց խորհուրդներուն համաձայն:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԸ



ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 1:10-17)



ՊԱՌԱՎԿՏՈՒՄՆԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԷՋ (1:10-17)

Գոհաբանական ու շնորհակալական խօսքերէ յետոյ, Պօղոս Առաքեալ անմիջապէս կ'անցնի քննադատելու, քննարկելու, ցոյց փայլու այն խնդիրները, որոնք առկայ էին Կորնթոսի համայնքին մէջ: Մա եւս յիշեցում մըն է այսօր մեզմէ իւրաքանչիւրին անդրադառնալու խնդիրներու մասին, որոնք նաեւ առկայ են Եկեղեցւոյ կեանքէն ներս: Այդ խնդիրները պառակտումներն են, որոնց մասին առաջին 4 գլուխներուն մէջ կ'անդրադառնայ Պօղոս Առաքեալ:

Ուստի, Պօղոս կը ներկայացնէ.

1. Պառակտումի մասին:
2. Աւերարանի ճշմարիտ բնոյթի մասին:
3. Զարոգելու ճշմարիտ կերպի մասին:
4. Քրիստոնէայ քարոզիչին ճշմարիտ դիրքին մասին:

«**Եղբայրներ, Մեր Տիրոջ Ցիսուս Քրիստոսի անունով կոչ կ'ուղղեմ ձեզի, որ բոլորդ միաբանիք, եւ պառակտումներ չըլլան ձեր մէջ. այլ միանաք եւ ըլլաք մէկ միպք, մէկ խորհուրդ»** (10 հմբ): Առաջին իսկ արքայապարտեանք, Պօղոս Առաքեալ ինքզինքին երբեք փերի կամ իշխանի հաւակնութիւնը չի փար հրամայելու, այլ իբրեւ եղբայր կը մօտենայ հարցին միաբանութեան կոչ ուղղելով Քրիստոսի անունով, որպէսզի գիտակցին, թէ հասցում վնասը մարդոց կամ խմբակցութեան չէ, այլ՝ Քրիստոսի եւ անոր Մարմինին՝ Եկեղեցիին: Երկրորդ, կոչ կ'ուղղէ ոչ թէ իր անունով, այլ՝ Քրիստոսի անունով, որովհետեւ նոյն այդ անունով է որ իրենք մկրտուեցան, որ կը նշանակէ այդ անունին կը պատկանին: Կոչը, որ վերջ դրուին պառակտումները եւ ըլլան մէկ միպք, մէկ խորհուրդ: Մէկ միպք կը նշանակէ Քրիստոսի միպքը ունեցէք, ինչ որ Քրիստոս պիտի մրաձեր, եւ ոչ թէ առանձին-առանձին իրենք ինչ կը մրաձեն (Կորնթ 2:16): Միւս կողմէ, Առաքեալը նաեւ կոչ կ'ուղղէ ներդաշնակ կեանք մը, որ կը նշանակէ ոչ թէ միապաղաղ, միօրինակ, այլ պարզաձ ու վայելուչ համակարգութիւն:

«**Քլոյխի ընթանիքէն ոմանք ձեր մասին խօսած արքեն իմացուցին՝ թէ հակառակութիւններ կան»** (11 հմբ): Անունով յիշել, որ կը նշանակէ լուրերը ստոյգ են: Այս պարագային նաեւ ծանօթ է Կորնթացիներու այս անունը:

«**Ձեզմէ իւրաքանչիւրը փարբեր բան կ'ըսէ. Մին կ'ըսէ. "Ես Պօղոսի կը հետեւիմ", ուրիշ մը՝ "Ես Ապողոսին", երրորդ մը՝ "Ես Կեփասին կը հետեւիմ"»** (12 հմբ): Այսպէղ յիշուած անունները, որքան ալ իրողութեան հետ կապուած երեւոյթներ ըլլան, նաեւ պարագայական են, իբրեւ օրինակ գործածուած, անով ցոյց փայլու կորնթացիներուն մրայնութիւնը, որովհետեւ իրենք ունէին այն սովորութիւնը դառնալու աշակերտ այսինչ կամ այնինչ յայտնի մեծ իմաստասէրի կամ ուսուցիչի: Անոնք շար աւելի շեշտը դրած էին ձեւին կամ կերպին վրայ փոխանակ Աւերարանին: Որովհետեւ վերջ ի վերջոյ բոլոր քարոզիչներն ալ նոյն Աւերարան է որ կը քարոզէին, անշուշտ իւրաքանչիւրը իր ոճով:

«**Միթէ Քրիստոս կողմերո՞ւ բաժնուած է: Միթէ Պօղոս՞ խաչ բարձրացաւ ձեզի համար. կամ Պօղոսի անունով մկրտուեցաք»** (13 հմբ): Պօղոս Առաքեալ շար յարակ բացապրութիւն մըն է որ կու փայ այսպէղ: Նախ ցոյց կու փայ որ Եկեղեցին Քրիստոսի մարմինն է, հետեւաբար անոր բաժանումը նոյնինքն Քրիստոսի բաժանումն է: Բայց եթէ Քրիստոս անբաժանելի է, ինչպէ՞ս ոմանք կը համարձակին բաժնել: Այսպիսի արարք մը դէմ է Քրիստոսի անձին միութեան: Նաեւ կարելի է այս արքայապարտեան մէջ փեսնել, որպէս Քրիստոս մէկէ աւելի: Արդեօք փարբեր է Պօղոսի քարոզած Քրիստոսը, փարբեր Ապողոսի, փարբեր Կեփասի: Մարդիկ կրնան կողմերու բաժնուիլ, բայց ոչ Քրիստոս: Որովհետեւ անբակարելի է Քրիստոսի Մարմինը, այսինքն՝ Եկեղեցին:

Տակաւին, ցոյց կու փայ անոնց ունեցած հաւապքին հակասութիւնը, որովհետեւ վերջ ի վերջոյ իրենք Քրիստոսի խաչելութեամբ է որ կը պատկանին Քրիստոսի, եւ ոչ թէ այսինչ կամ այնինչ քարոզիչին, որ կը քարոզէ այդ Աւերարանը: Եւ ի վերջոյ, մկրտութեան հարցը, որովհետեւ ինչ անունով որ մկրտուեցան այդ անունին կը պատկանին եւ ընդունիլ իբրեւ Տէր եւ Փրկիչ:

«Որովհետեւ Քրիստոս զիս մկրտելու չորկեց, այլ՝ անտարանելու. եւ անտարանելու՝ առանց խօսքի ճարտարութեան դիմելու, որպէսզի Քրիստոսի խաչելութեան մասին քարոզութիւնը իր ոյժէն չպարպուի» (17 հմբ): Պօղոս ինքզինք կը սահմանէ ոչ իբրեւ մկրտիչ, այլ՝ իբրեւ անտարանիչ: Այդ եղաւ իր առաքելութիւնը Կորնթոսի մէջ: Այո, որքան ալ մկրտութիւնը կարեւոր է, սակայն, քարոզչութիւնը, անտարանելը, անլի, այն իմաստով, որ մկրտութեան պարագան ուրիշ բան չէ եթէ ոչ կնիքը եւ պսակումը անտարանչութեան: Քրիստոսի հետեւեալ պատուերը փուտ իր աշակերտներուն. «*Գացէ՛ք, եւ բոլորը ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէ՛ք, եւ զանոնք մկրտեցէ՛ք Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով*» (Մարթ 28:19): Առաքեալը, հետեւաբար, յանձն առած էր անտարանել, բարի լուրը փոխանցելու, մոլորութիւնները հերքելու, ճշմարտութիւնը հաստատելու: Այս բոլորը ընելու համար կը պահանջուէր քաջութիւն, հոգեկան արիւթիւն դիմագրաւելու վրանգները:

Առաքեալը դրկուած է անտարանելու, բայց այդ քարոզութիւնը ոչ խօսքի ճարտարութեամբ, որպէս հռետորական ճառեր, գեղեցիկ խօսքերով քարոզներ: Այլ պարզ անտիս եւ պարզամ, անձով մը պայմանաւորուած, Աստուծոյ հետ հաշտութիւն եւ փրկութեան կոչ, Քրիստոսի խաչին վրայ կեդրոնացած: Ճարտար խօսքը միայն միտքերը զբաղեցնելու եւ գոհացնելու կը ծառայէ, մինչդեռ խաչելութեան քարոզութիւնը իր ոյժը խօսքին մէջ չէ, այլ՝ խաչին ու խաչեալին, որպէսզի անով հոգիները դարձի գան ու փրկուին:

ԱՊՈԹԶ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*